ՆԱԽԱԳԻԾ 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

-Ն

<<ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրել <<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) սեփականության իրավունքով իրեն պատկանող Ք, Երևան, Չարենցի 17 հասցեում գտնվող 1896.0 քառ, մետր շինությունով և շենքի սպասարկման համար նախատեսված 0.0754 հա հողատարածքով (այսուհետ՝ գույք) վճարել այդ ընկերության կողմից տեղաբաշխված, պետությանը պատկանող համապատասխան քանակի բաժնետոմսերի՝ օրենքով սահմանված կարգով ձեռքբերման դիմաց:

2. Ընկերության կողմից ձեռքբերված բաժնետոմսերը մարելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալը:

3, Ավելացված արժեքի հարկի վճարումն իրականացնել <<Հայաստանի Հանրապետության 2010թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

4, Սույն որոշման 1-րդ կետով սահմանված գույքն ամրագրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի տնօրինման վերաբերյալ:

6. <<Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված ք. Երևան, Կոմիտասի 49/3 շենքի 10-րդ և 11-րդ հարկերում 800 քառ. մետր տարածքը հետ վերցնել և մինչև 10 տարի ժամկետով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության իրավունքով հանձնել <<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերությանը:

7. ՀՀ էկոնոմիկայի նախարարին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ ապահովել սույն որոշման 6-րդ կետում նշված տարածքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև ընկերության հետ համապատասխան պայմանագրի կնքումը:

Ն. Երիցյան

Տեղեկանք
<<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ պետական բյուջեի փոփոխությունների վերաբերյալ

<<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

Տեղեկանք
<<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման վերաբերյալ

<<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունում կամ այլ իրավական ակտերի փոփոխություն չի նախատեսվում:

Հիմնավորում

<<Զարգացման հայկական գործակալություն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման

1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Իրավական ակտի նախագծի ընդունման անհրաժեշտությունն է շենքային համապատասխան պայմաններով ապահովել <<Համահայկական բանկ>> ԲԲԸ-ը:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկա դրությամբ <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանում է Ք, Երևան, Չարենցի 17 հասցեում գտնվող 1896.0 քառ, մետր շինությունը և շենքի սպասարկման համար նախատեսված 0.0754 հա հողատարածքը:

1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նկատի ունենալով որ վերոգրյալ անշարժ գույքը ներդրված է եղել <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ կանոնադրական կապիտալում, անհրաժեշտ է նվազեցնելով կանոնադրական կապիտալը, վերոնշյալ գույքով հատուցել ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումը և մարումը:

2. Կարգավորման առարկան

3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի կիրառման արդյունքում <<Համահայկկան բանկ>> ԲԲԸ-ը ապահովված կլինի իր գործունեության համար անհրաժեշտ բոլոր շենքային պայմաններով: